600.0074.27.12.01

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 դեկտեմբերի 2001 թվականի № 74
ք. Երևան

«ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության բնական գազի ներկրման № 0033 գործունեության լիցենզիայի ժամկետը երկարաձգելու մասին

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 23-րդ և 30-րդ հոդվածները« «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի բ) կետը, 23-րդ հոդվածը, ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի 2000 թվականի հունիսի 7-ի № 11 որոշմամբ հաստատված կարգը, ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի 2000 թվականի դեկտեմբերի 18-ի № 29 որոշման 1-ին կետով սահմանված «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության բնական գազի ներկրման № 0033 գործունեության լիցենզիայի ժամկետը երկարաձգել մինչև 2003 թվականի հունվարի 1-ը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀՀ էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի նախագահ՝ ***Վ. Մովսեսյան***